Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջև 08.02.2012թ ստորագրվել է համագործակցության մասին. փոխըմբռնման հուշագիր: Կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով.

1 **Օրենսդրական նախաձեռնություն -** նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակում և ներկայացում իրավասու մարմիններին:

2 **Արագ արձագանքման միջոցառումներ -** Ոստիկանության աշխատակիցների և փաստաբանների միջև՝ կապված նրանց մասնագիտական պարտականությունների կատարման հետ, որևէ խնդիր ծագելու դեպքում, այդ խնդրի անհապաղ քննարկումը և օրենքի տառին համապատասխան լուծումը:

3 **Վարքագծի կանոնների պահպանման ապահովում -** ոստիկանների կամ փաստաբանների կողմից վարքագծի կանոնների խախտումների հայտնաբերումը, փոխադարձ իրազեկումը և պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը.

4 **Սեմինարներ և միջոցառումներ -** անցկացվելիք միջոցառումների և/կամ սեմինարների մասին տեղեկատվության փոխանակում: Փոխադարձ դասընթացների վարմանը մասնակցություն:

5 **Քննարկումներ -** համատեղ քննարկումների (կլոր սեղաններ) կազմակերպում՝ իրավունքի կամ գործնական ոլորտում առաջացած խնդրահարույց և այլ հարցերի կապակցությամբ:

Ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններով:

Կողմերը ստեղծել են հասարակական հիմունքներով գործող վեց անդամներից կազմված հանձնախումբ (այսուհետ՝ Հանձնախումբ), որը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Ոստիկանության պետի հրամանով նշանակվում են Հանձնախմբի երեք անդամները՝ Ոստիկանության համակարգից, որոնցից մեկը Ոստիկանության համակարգող, Պալատի նախագահի որոշմամբ նշանակվում են Հանձնախմբի երեք անդամները՝ փաստաբանների կազմից, որոնցից մեկը Պալատի համակարգող:

Բեռնել Հուշագիրը

Հուշագրի շրջանակներում ստեղծված հանձնախմբի՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը ներկայացնող անդամներն են՝ Կարապետ Աղաջանյանը, Գևորգ Մկրտչյանը և Գառնիկ Թուխտարյանը:

Կարապետ Աղաջանյան
Հանձնաժողովի համակարգող
Փաստաբան

Գևորգ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան

Գառնիկ Թուխտարյան
Հանձնաժողովի անդամ
Փաստաբան